

Թիւ 27589  
Նոյեմբեր 24, 1981

Արժանաշնորհ

Տ. Եռևսիկ ՔԻՆՅ. Նշանեան  
Առժամշայ Հովհե Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նախագահ Նիշական Խորհուրդի  
Գանձատան

Միջնական Տէր Եռևսիկ,

Սահածած ենք Հոկտեմբեր 21, 1981 թուակիր նամակ մը նանբլա  
Միւլը քառարարանի ստորագրութեամբ, որ Սուլքը Խաչ Եկեղեցւոյ  
վարելիք թեմական առւրցերու կապակցութեամբ թելադրութիւն  
կ'ընէր եւ 1000 --մէկ հազար-- առլարի փոխակիր մը ներփակած  
էր:

Թեմական Խորհուրդի Հոկտեմբեր 28 նիստին մէջ առնուած որո-  
շումին նամածայն, քաստարանին վերադարձուցինք հոխզիրը՝ յայա-  
նելով որ Առաջնորդարանը իր ծուլութուն հնտ ուղղակի կը հաղոր-  
դակցի:

Ենական Խորհուրդի պարագանութիւնն է հնագանցի Հայց. Եկե-  
ղեցւոյ կանոններուն եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեակ թեմի  
Կանոնադրութեան, իրեւեւ թեմական իշխանութեան հրամանով կազմա-  
կերպուած նամայնք մը:

Գանձատական կառավարութեան հետ որեւէ օրինական հարցի մը:  
առջեւ գտնուելու պարագային թեմական իշխանութիւնն է որ պիտի  
ներկայանայ իր քաստարաններով, պաշտպանելու համար թեմի ծու-  
խերու իրաւական կացութիւնը:

Անգամ մը եւս ձեզի կը հրահանգենք որ ամբողջութեամբ վճառ  
րէք թեմական ժողովի. Կողմէ որոշուած ներկագիր քամին հանուած  
թեմական առւրցը, որուն անվար քանակը ծնր ցանցառութեան պահ-  
նառաւ քարձրացած է մինչեւ 17,080 —առանցքութիւնը հազար ութսուն-  
ամերիկան առլարի:

Նաեւ վերջին պատեհութիւն մը կուտանք ժեզի՝ ներկայանալու թեմական խորհուրդին, եւ Մշղելու ժեր կացութիւնը:

Ուստի, կը հրահանգենք ժեզի որ՝ Ս. Խաչ Եկեղեցւոյ ծխական խորհուրդի կողմէ երեք անձեր նշանակէք որոնք լիազօրուած ըլլան յանուն ծխական խորհուրդին պատասխաննելու իրենց ուղղութելք հարցերուն: Այս ժողովի թուական նշանակած ննջ 1981 Դեկտեմբեր 18, Ռւբրաթ, Նիւ Պրիեթ Գլնէթիթէթի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ, ուր եւ պիտի զումարուի թեմական խորհուրդի ժողովը:

Կը ներփակենք օդանաւային քնկերութեանց երթուղարձի ժամանակացոյցը եւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ հասցէն ու հեռածայնի թիւը:

Զեր ներկայացուցիչները պէտք է իրենց հետ քերած ըլլան 17,080 --տասնըսթից հազար ութսուն-- ամերիկան տոլարի փոխզիր մը:

Որեւէ պատճառու այս հանդիպումին նըտառակը ծախողելու պարագային, թեմական խորհուրդը իր որոշումը պիտի առնէ հեռացնելու Հոգեւոր Հովիւը եւ պաշտօնանի լինելու ծխական խորհուրդը:

Նը յուսանք որ ծխական խորհուրդը իմաստութեամբ եւ հաւատաբութեամբ կ' ենթարկուի թեմական իշխանութեան հրահանգներուն՝ ազահովելու համար խաղաղ քարգաւաճումը ծուխին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՃՈՒ ԱՐՁԵՎԻՍԿԱՊՈՍ  
Առաջնորդ

Օրինակ՝ ծխական խորհուրդի Առենապեսին